ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» դեկտեմբերի 2014թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն պետական-հասարակական գործիչ, պատմաբան, մտավորական Ստեփան Պողոսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի հ. 45ա հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ստեփան Կարապետի Պողոսյանը ծնվել է 1932 թվականի հունվարի 1-ին:

1955 թվականին ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը:

1970-1988թթ. եղել է Հայաստանի հեռուսառադիոպետկոմի նախագահ:

1988-1990թթ. ղեկավարել է «Արմենպրես» լրատվական գործակալությունը:

1990թ. եղել է Հայաստանի մամուլի և հրատարկչությունների պետկոմի նախագահ:

1990 թվականին ընտրվել է ՀԿԿ Կենտրոնական կոմիտեի առաջին քարտուղար:

1991 թվականին հիմնադրել է Հայկական հարցի ուսումնասիրության գիտական կենտրոնը:

1991-1992թթ. եղել է «Երկիր ավետյաց» թերթի գլխավոր խմբագիրը:

1997-2009թթ. Ս.Պողոսյանը դասավանդել է Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարանում, գլխավորել համալսարանի Հայկական հարցի ու Հայոց ցեղասպանության պատմության գիտական կենտրոնը:

2000-2009թթ.՝ եղել է Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի անդամ, իսկ 2009-2012թթ.՝ Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահի գլխավոր խորհրդական:

Պետական-հասարակական գործիչ, պատմաբան Ս. Պողոսյանի աշխատությունները վերաբերում են Հայկական հարցին, Հայոց ցեղասպանության և ազգային-ազատագրական շարժումների պատմությանը (Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն» հ.1-3, 2000-2003թթ., «Հայացք անցյալին, հանուն այսօրվա ու վաղվա» 2002թ., «Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն, Նահատակներ հավերժության» 2005թ. և այլն):

Ստեփան Կարապետի Պողոսյանը պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» առաջին աստիճանի և «Մովսես Խորենացի» մեդալներով, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրերով:

«Հայ ժողովրդի պատմություն» (1988թ.) հեռուստաֆիլմերի շարքի համար Ս. Պողոսյանին շնորհվել է Հայկական ԽՍՀ պետական մրցանակ, 2010թ.՝ Հայաստանի «Թեքեյան» մշակութային միության ԹՄՄ «Հայկաշեն Ուզումյան» գրական մրցանակը:

Հաշվի առնելով Ստեփան Պողոսյանի մեծ վաստակը, նրա անուրանալի ծառայությունները, հատկապես՝ հայկական հեռուստատեսության և ռադիոյի կայացման գործում, Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Ստեփան Պողոսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագիծը:

Ստեփան Կարապետի Պողոսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Երևան քաղաքի Մաշտոցի հ. 45ա հասցեում տեղադրելու վերաբերյալ միջնորդությունը ներկայացրել է Հանրային հեռուստաընկերության տնօրինության կողմից։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ստեփան Պողոսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ստեփան Պողոսյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ *Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ*